



Տարեկան գին 8 ՄԶԸ
Պատկերացում 10 ՄԶԸ
Վերադարձում 4 ՄԶԸ
Գրականություն 5 ՄԶԸ
Կապիտալի վրա 60 ֆոյ
Հարկերի վրա 10 ֆոյ
Կապիտալի վրա 10 ֆոյ
Կապիտալի վրա 10 ֆոյ



Գրականություն
Վերադարձում
Կապիտալի վրա
Կապիտալի վրա
Կապիտալի վրա
Կապիտալի վրա
Կապիտալի վրա
Կապիտալի վրա

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԻՆԻ ՍՏԱՆԻՍԼԱՎ ԿՈՄԻՏԵ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ծագած օրը դարձեալ Բ. Դուռը մեծ ժողով մը գումարեցաւ, ուր ներկայ էին պաշտօնաւոր և անպաշտօն նախարարք և վեդիք, Պալայի աստիճան ունեցող պաշտօնատարք, ընթացիկ փայտի ունեցող իւլեմաներ և զինուորական կարգէն Միւշիններ ու զինքները: Այս ժողովին վաթսու և հինգ հոգի չափ ներկայ գտնուեցան, և դեպքանախորհրդին նկատմամբ խորհրդակցութիւն եղաւ: Թէ ժողովին որոշման վրայ պաշտօնական յայտարարութիւն չկայ, բայց նկատողութեան առնուած է եղեր մէկ կողմէ Եւրոպիոյ հասարակաց կարծեաց թուրքիոյ դէմ զայրացումը՝ շատ մը թշնամալի հրատարակութիւններով, և միւս կողմէ կայսերական կառավարութեան խաղաղամտէր ընթացքն, որով Ռուսիոյ վերջնապէս իսկ ընդունեց: Բարեբաղդաբար Եւրոպա և մանաւանդ Անգլիա, Ռուսիոյ նպատակներն աւելի ճշդիւ կասկածելով, անոր աշխարհակալ դիտաւորութեանց օժանդակելէ կը խորշն, և այս ընթացքով Ռուսիոյ կառավարութեան իրաւանց կը նպաստաւորեն: Այս խորհրդածութեանց նպատակ, կերելի որ շարժաւ աւուր մեծ ժողովը դեպքանախորհրդին ընդունած է: Այսու ամենայնիւ ժողովն որոշած կերելի որ եթէ տէրութեան իրաւանց վնասակար ձեռնարկ մը ծագի, մինչև վերջին կէտ դիմադրութիւն ըլլայ:

Ինչ պիտի ըլլայ դեպքանախորհրդին հիմն, և անոր մէջ ներկայանալի առաջարկները: Եւրոպական թերթերէն ոմանք կը ծանուցանեն թէ դեպքանախորհրդին վիճարանութիւններն հետեւեալ կէտերուն վրայ պիտի հիմնուին. այսինքն նախ Ռուսիոյ կայսրութեան ամբողջութիւնն ու անկախութիւնը դարձեալ պիտի ճանչուի ու հրատարակի. երկրորդ ամեն մէկ տէրութիւն յայտարարութիւն պիտի ընէ թէ երկիր ընդարձակելու և թուրքիայէն մասնաւոր առեւտրական շահեր ձեռք բերելու համար ազդեցութիւն չի գործ չպիտի գնէ. երրորդ՝ ապստամբեալ դաւառաց խաղաղութեան համար Սըր Հէնրի Էյլիօթի միջոցաւ Անգլիական կառավարութեան առաջարկները խնդրոյն կարգադրութեան հիմ պիտի բռնուին: Անգլիոյ լրագրողներէն ոմանք կըսեն թէ ապստամբեալ դաւառաց խաղաղութիւնը վերադարձը ներքին համար, Անտրասի կոմիտէի ծանուցադրոյն հինգ կէտերը հիմ բռնուելով, տեղական ինքնակառավարութեան սկզբունքը պիտի յարգուի:

Բայց այնպիսի եղանակաւ, որպէս զի նոր բարեկարգութիւնները՝ միայն Սլավաց համար բացառիկ շնորհներ չ'ըլլան, այլ որչափ կարելի է՝ ընդհանուր կերպիւ գործադրին: Յոյներն ալ արդէն կը պահանջեն որ Սլավաց հաւասար բռնուին: Արդէն, ինչպէս յայտնի է, Յոյնը այս պահանջարկը համարելով կը պատրաստեն եղեր իրենց պատրիարքարանին միջոցաւ Բ. Դուռն մատուցանելու: Ռուսի հասարակութիւնը թէ և հանրագիր ալ չեն կայացներ՝ չեն կրնար անտես լինել: Ռուսի տէրութիւնները պիտի պարտաւորին այնպիսի գումարներ մը գտնել, որ կարենայ համաձայնիլ ժողովրդեան օրինաւոր բաղձանաց և Ռուսիոյ կառավարութեան իրաւանց հետ: Անգլիական ծրագրին երկրորդ կէտն է եղեր կրօնական ազատութիւն: Այս կէտն ալ ստակաւն միջին է. տէրութիւնը քրիստոնեայ հասարակութեանց կրօնքին չ'իջաւոր. սակայն եթէ կատարեալ կրօնական հաւասարութիւն է նպատակը, օրինաց և սովորութեանց մեծ փոփոխութիւններ պէտք են, զորս գրեթէ անհնար է դեպքանախորհրդով իրականացնել: Անգլիոյ ծրագրին աւելին գործնական և օգտակար մասը տնտեսական և երկրագործական բարեփոխումն են, որոյ կարգէն է տրոյց վարձակալութեան բարձումը, տեղական տրոյց տեղւոյն պիտի չի համար գործածութիւնը, կալուածական օրինաց բարեփոխութիւնը և այլն: Այս բարեկարգութիւնները թէ՛ դանձու և թէ՛ ժողովրդեան օգտակար են. վարձակալութեան բարձումը շատ մը գեղծումներ ալ ի միտքն պիտի վերցնեն. տեղական տրոյց տեղւոյն պիտի չի գործածութեամբ գաւառները կը զարգանան, ճանապարհներ կը շինուին, երկրագործութիւնը կը ծաղկի: Իսկ բարեկարգութեանց երաշխաւորութեան համար անոնց գործադրութեան վրայ հսկող խառն յանձնաժողովներ կազմուի, կամ աւելի ազդեցութիւն ունենալու համար՝ Եւրոպացի ընկերներ կարգելու առաջարկութիւն կը լըլայ: Այս կարեւոր կէտերուն վրայ դեպքանախորհրդին մէջ երկար վիճարանութիւն պիտի ըլլայ. բայց արդեօք պիտի կըրնան համաձայնութիւն հաստատուիլ: Կարծենք թէ ասիկա ալ խիստ հաւանական է, քանի որ Եւրոպա թուրքիոյ ամբողջութիւնը հիմնական սկզբունք մը կընէ իրեն: Անգլիոյ կառավարութիւնը՝ Հնդկաստանի գործոց նախարար Լորտ Սալիսբըրին դեպքանախորհրդին մէջ իրեն լիազոր երեսփոխան կարգելով ցոյց կու տայ թէ Հնդկաստանի մէջ իւր շահերը պաշտպանելու հաստատուած մտադրել է, և թէ հետեւաբար թուրքիոյ անկախութիւնն այս անգամ ևս

պիտի պահպանէ: Անգլիական թերթերը կըսեն թէ իրենց տէրութիւնն Հնդկաստանի մէջ յիսուն միլիոն Մահմետական հպատակ ունենալով, չկրնար ներքէն որ Սլավոնի իրաւունքը բռնաբարի: Հեռագիրը ծանոց թէ Անգլիա Արեւելք գրկուելու համար հետեւի հեծեալգոր և թնդանօթաձիգ զօրք կը պատրաստէ: Թէպէտ ըստ ոմանց այս զրոյցը տակաւին հաստատութեան կարծի է, բայց ոչինչ նուազ ստոյգ է որ թէ Անգլիա և թէ Ռուսիա պատերազմական պատրաստութիւնները կը փութացնեն: Բեդրապուրիլ Էնվալիտ Ռիւս լրագրողը նոյ. 1/13 թուով կայսեր մէկ ուղարկ (հրամանագիր) կը հրատարակէ, որ հարաւային Ռուսիոյ զօրքերը շարժական վիճակի մէջ դնել կը հրամայէ. այն է Քիւբի, Օնեսայի և Խարքովի զինուորական շրջանաւոր մէջ սպասող զօրաբաժիններն, որոց գումարն է 193000 հետեւի, 28700 հետեւի և 624 թնդանօթ, վեց զօրաբանակի բաժնուած, և անոնց ընդհանուր հրամանատար կը կարգէ Նիքոլայ մեծ դուքս: Միւս անգամայն Դուրի ծովագործը պայթիկ մեքենաներ (թորթիլ) դըրուած են: Ինչպէս յայտնի է, Ռուսիոյ կայսերական կառավարութիւնն ալ ծովային և ցամաքային պատրաստութիւնները զանց չ'ընեն, թէև դեպքանախորհրդին միջոցաւ հաշտութիւնը պահելու յոյսերը տակաւին ոչնչացած չեն:

Ռուսիոյ կայսեր Մուքոմայի մէջ խօսած ճառին բնագիւնը Եւրոպական լրագրաց մէջ հրատարակեցաւ: Այս ճառը զանազան կերպիւ գրուեցաւ, ըստ ոմանց բանական, և ըստ այլոց պատգամաւորութեան մ'ուղղուած է եղեր: Բայց Ալեքսանդր Բ. կայսեր հիմնական գաղափարն յայտնի եղաւ, այն է որ եթէ դեպքանախորհրդը չ'յաջողի խաղաղութեամբ իւր նպատակն ապահովել, պատերազմի պիտի գլխէ: Կայսրը Գարատալիսէն ըր «Դիւյազն» կոչեց, և ցաւ յայտնեց որ Սերվիայացոց համար ալ նոյնը չ'ընար ըսել: Նոյ. 3/17-ին ալ կայսրը բանակին հրամանատարաց ուղղելով խօսքը, անոնց յաջողութիւն մաղթեց: Բայց Չէնայէի Ռուսիա վերադարձն արդիւնք է՝ Սաւրիոյ կայսրը ինչ լիազանց, ուր Հունգարիոյ նախարարաց գլուխ Պ. թիծա երեսփոխանաց ժողովէն վստահութեան քուէ խնդրեց կառավարութեան համար և ընդունեցաւ, ծանուցանելով թէ Սաւրիա ալ խաղաղաբար շանքեր պիտի ընէ. այսու ամենայնիւ՝ զօրք տանելու հաւանականութեան պատճառաւ Լոյտի ընկերութեան բաժիններն ինկան:

Լոնտոնի կազմ լրագրողը նոյ. 11 թուով Լորտ Տերպիի մէկ հետագիրը կը հրատարակէ ուղղեալ առ Լորտ Լոքիլիս հոկտ. 30 թուով: Յիշեալ հետագիրը՝ զինադադարը ձեռք բերելու և խաղաղութիւնը վերահաստատելու համար Անգլիոյ ըրած ջանքերը կը յիշէ: Հոկտ. 3-ին Լորտ Տերպի հրաւիրել է զվեր Հ. Էյլիօթ յայտարարել Դրան, որ եթէ Դուռը զինադադար կընքելու համար, ինքը պիտի մեկնի Կ. Պոլսէն, որովհետև այն ժամանակ բացայայտ պիտի ըլլար, որ Դուռը կորուստէ իրկելու համար Անգլիոյ ընդելը նոր ջանքերն անօգուտ էին այնուհետև: Երբոր Դուռը վերամտեայ զինադադար առաջարկեց, Եւրոպայի կոմիտէն այս զինադադարին Ռուսիայէն ընդունուելուն վրայ կասկած յայտնել է: Լորտ Տերպի դեպքանախորհրդինը հրաւիրել է հաւարակաց կարծեաց մէջ ըլլալիք փոփոխութեան վրայ, եթէ Անգլիոյ ժողովուրդը հաւատայ թէ Կ. Պոլսի վստահի մէջ է: Երբոր Ռուսիա վերամտեայ զինադադարը մերժեց, Լորտ Տերպի Գերմանիոյ միջնորդութիւնը խնդրել է, Միւնխէր կոմիտէն միջոցաւ. բայց Պրուսիոյ իշխանը պատասխանել է թէ Գերմանիոյ կառավարութիւնը խորհրդով հանդերձ թէ երկար զինադադար մ'ընդունելի էր, բայց և այնպէս որ ինչ տէրութեանց որոշումներուն վրայ ճնշում բանեցնելու իրաւունք մը չէր տեսներ իւր վրայ:

Սաւառի Ռուսաց Ալեքսանդր կայսեր Մուքոմայի մէջ ըրած տառնախօսութիւնն, որոյ քաղաւածք տըւած է ինքը նախընթաց թուով: «Շնորհակալ եմ ձերնէ, տես՝ քան ձեր զգացմանց համար, զոր քաղաքական ներկայ պարագայից առթիւ յայտնեցիք ինձ: Բերկութեամբ կընդունիմ ձեր ուղերձը: «Գիտէք արդէն թէ Սերվիոյ ու Գարատալիս մէջ եղած անօգուտ կոտորածոց վերջ մը տալու նպատակաւ զինադադար մը կընքելու առաջարկութեան զիջաւ թուրքիոյ: Այդ անհաւասար կուլին մէջ, Գարատալիս ցիւր, ինչպէս միշտ, ճշմարիտ գիւյացուններ եղան: «Կը ցաւիմ որ չեմ կրնար նոյնն ըսել Սերվիայացոց համար ալ, թէ և մէջերնին ռուս կամաւորք ալ կան, որոց շատն իրենց արկներ թափեցին Սլավոնի դառնին համար: Գիտեմ որ ինձ հետ համայն Ռուսիա չ'սրտէ կը կարեկցի մեր կրօնակից և ցեղակից եղբարց կրած տառապանաց. բայց ինձ համար, Ռուսիոյ ճշմարիտ շահերն առաւել սիրելի են ինձ: Կուղեմ՝ մինչև վերջին վայրկեանը՝ իւր

* Ս. Պ. Կարպիսի պատմական գործը կըսուի անկախութեան պայքարը: Ե. Գանի խմբ.

Նայել ռուսական արևելքը : Այս պատ-
ճառում է որ Նանայի և տակալին կը
շանամ խաղաղական միջոցներով ձեռք
բերել Արևելեան բոլոր ըրևասանէից
վիճակին բարեփոխումը :

“ Այս օրերս վեց տնտեսական և
քաղաքական հարցերու վերաբերեալ
մը պիտի դուրսբերի խաղաղութեան
պայմաններուն վրայ խորհրդակցելու
համար : Իմ ամենասիրելի իղձս է որ
կարենանք համաձայնել : Բայց եթէ
չկրնանք համաձայնել, և եթէ տես-
նեմ որ մեր իրաւամբ պահանջածնե-
րուն կատարուին ապահովող երաշ-
խաւորութիւնները չպիտի կրնանք
ձեռք բերել, հաստատութեամբ ու
ընդամենը անկախաբար գործել, և
աներկմիտ եմ, որ այս պարագային
մէջ համայն Ռուսիա իմ հրաւերին
պիտի պատասխանէ՝ եթէ հարկաւոր
դատիմ, և եթէ Ռուսիոյ պատիւը
պահանջէ : Նմանապէս անկասկած
եմ որ Մոսկուա առաջին պիտի ըլլայ
բարի օրինակը տուող :

“ Աստուած օգնէ մեր սուրբ պաշ-
տօնը կատարելու :

Ահաւասիկ մայրաքաղաքն Ռու-
սական դեսպան ինկալիսի Գորա-
վարին առ Բ. Դուռն զրկած վերջ-
նագիրն ալ որոյ նոյնպէս քաղաքը
տուած էինք նախընթաց թուով :

Պէտք ըստէս 19/31 հոկտ.
ժամ իրիկուան 7.

« Մտորութեամբ արտաքին կարգի
լիազոր դեսպան Վեհ. կայսերն ամե-
նայն Ռուսաստանէն, պաշտօն ստա-
ցած է հետեւեալը ծանուցանելու Բ.
Դուռն արտաքին գործոց նախարար
Վսեմ. Սաֆվէթ փաշային :

« Տարեւ մի վեր Օսմանեան կայս-
րութեան մէջ անցած անցերն, որք
Սերվիոյ և Գալաթիոյ իշխանու-
թեանց և թուրքիոյ մէջ պատերազ-
մի առիթն եղան, չէին կրնար ան-
տարբեր թողուլ (Ռուսիոյ) կայսերա-
կան կառավարութիւնը :

« Այն անցերը բուռն արձագանք
գտնելով Ռուս ազգին մէջ, որ բազ-
մապատիկ կապերով և գաւառոր ա-
ւանդութեամբ միացած է Պարսիկի
թերակողմին ըրևասանեայ բնակչաց
հետ, Վեհ. կայսրը բաժնակցեցաւ
իւր ժողովրդեան համակրանայն, և
միտ մեծ տէրութեանց հետ համա-
ձայնութեամբ միջնորդեց ի վերա-
հաստատութիւն բարեկարգութեան
և խաղաղութեան : Երաշխաւոր տե-
րութիւնը համաձայնութեամբ որո-
շած ըլլալով խաղաղացման հիմ գետը
Սերվիոյ ու Գալաթիոյ իշխանու-
թեանց մէջ պատերազմէն առջի վի-
ճակին անփոփոխ պահպանել, Օսմանե-
ան գորաց կողմէ այն երկիրներուն
մէջ շարունակուած զինուորական
գործողութիւնը անօգուտ արիւն-
հեղութեանց պատճառ մ'են : Վեր-
ջին օրերս արեան նախնիներն այն-
պիսի համեմատութեանց հասած ըլ-
լալով որք մարդկութեան զգացումը
կը վիրաւորեն առանց բնաւ արդիւն-
քի, իմ Օգոստոսի 8-էրո՝ կայսրը
չկրնար աւելի երկար ժամանակ նե-
րել զանոնք սեղմալ զինադադարի
մը համար եղած բանակցութեանց
կրած դանդաղանայն առջի :

« Հետեւեալ ստորագրելոյ պաշ-
տօն յանձնուած է յանուն Վեհ. կայ-
սեր յայտնել Դրան, որ եթէ ներկայ
ծանուցադրի տրուելէն ետեւ մինչեւ
երկու անգամ քսանէ չորս ժամ՝ վեց
շաբաթէն երկու ամիս իրական և ա-
ռանց պայմանի զինադադար մը չը-
կնքուի, և եթէ կարուկ հրամաններ
չըրկուին Օսմանեան գորաց հրամա-
նատարներուն՝ որպէս զի զինուորա-
կան ամեն գործողութիւնը անմիջա-
պէս դադարեցնուի : Եւ ինչպէս

պէս դադարեցնուի պիտի
մեկնի Կ. Պոլսէն՝ կայսերական դես-
պանատան ամեն պաշտօնէից հետ :
« Ստորագրեալ կողմէ Վսեմ.
Սաֆվէթ փաշային, որ իւր բարձր
յարգանաց անձնական հաստատե-
լնդունի :
(Ստորագրեալ) Ինկալիսի :

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 17 նոյ.
Անգղիա և Ռուսիա կը ժողովեցնեն
իրենց պատերազմական պատրաստու-
թիւնները :
Փարիզ 17 նոյ.
Այսօր Սէվրի նոր գործարանին բաց-
ման հանդիսին առիթով Պ. Կամպիլի
առաջին անգամ Մարտի մարտի տոն
տօնի ներկայացաւ հասարակաց կրթու-
թեան նախարար Պ. Վալենտինի մի-
ջոցաւ :

Բեղրադուր 17 նոյ.
Կայսրը զօրահանդէս ընելու առիթով
հրամանատարաց դաշնաւոր ըստ. « Վա-
ւաղ այն յաջողութիւն կը մտղմենք սպա-
րապետաց :

Պարիզ 17 նոյ.
Յօդով իշխանին ատենախոսութեան
ի պատասխան պատրաստուած ուղերձն
ընդունեց, և Դանուբի վրայ հսկողու-
թիւն ընող գորաց և վարժութիւն ընե-
լու կողմէ պահանջող զինուորաց առիթով
եղած ծախսը համար ինչպէս անհրաժեշտ
ընտրեց :

Սթէն 17 նոյ.
Քաղաքական վիճարանութիւնն ա-
ւարտեցաւ : Նախարար 88 թուէ չահե-
ցան 75-ի դէմ :

Վիեննա 17 նոյ.
Լոյսի ընկերութեան բաժինները 23
և պահ մը մինչեւ 28 1/2 ֆլորինի իջան :

Բէլա 17 նոյ.
Պ. թիմա՝ Արեւելեան գործոց վրայ
նոր հարցման մը պատասխանելով խընդ-
րայն փափկութիւնը հասկցուց և հետեւե-
աւոր ազգային երեսփոխանաց հայրենա-
սիրութեան հրաւեր կարգաց ծանուցա-
նելով թէ ծանր պատասխանատուութիւն
կրնայ ինչպէս իրենց վրայ՝ եթէ նախարա-
րութեան վրայ վստահութիւնն նուրբ խո-
հանքութիւն և պարագրիւթութիւն չու-
նենան : Սկստի, ըստ, կառավարու-
թիւնը չուզեր նոր բացատրութիւններ
տալ Արեւելի մէջ ընտանք քաղաքակա-
նութեան նկատմամբ : Եւ աւելցուց :
« Ռուսիոյ կայսեր նոր ատենախոսութիւն-
նը բնաւ խօսք մը չընէր Աստուծո՝ շուն-
դարից վրայ, որ հետեւեալը՝ չկրնար
իրեւ ապրանքաւոր նկատուի : Կառա-
վարութիւնը զիրք մ'առած է Արեւելեան
խնդրէն մէջ և այն զիրքը պիտի պիտի
բռնէ : Կ. Պոլսի դուրսբերելը դեսպա-
նախորհրդին մէջ պարզը պիտի համարի
իրեն՝ ամեն հնարաւոր ջանք ընել խաղա-
ղութիւնը պահպանելու համար, և միան-
գամայն ամեն հարկ եղածն ընել : Աստ-
ուծո՝ շունդարից միասնականութեան շահերն
ամեն պարագայից մէջ անվերապա պահե-
լու համար : »

Լոնտոն 17 նոյ.
Ձինուորական պատրաստութիւնը մեծ
փութով առաջ կը տարուին : Հրամաններ
զրկեցան ի վերջի շաբաթի երկու մի-
լիոն փամփուշտ շինելու :

Պաշտօնական կայսեր արձագանքը ստացող
բոլոր զինուորականը կոչուեցան :
Պէրիքտ 17 նոյ.
Նայեֆ գործարանի Ռուսիա վերադառնա-
լն արգիլուեցաւ :

Պարիզ 17 նոյ.
Երեսփոխանաց ժողովին մէջ ծայրա-
գոյն ծախսակողմեանը չներկայացուցին ի-
րենց առաջարկութիւնն, որոյ մէջ հար-
կաւոր կը նկատուին Օսմանեան կայսրու-
թեան անկախութիւնն ու հողային բա-
ցարձակ անդադարութիւնն անվերապա
Նախարարաց խորհրդայ նախագահը
(Պ. թիմա) խոսեցաւ թեմա յարգելու կար-
գաց և բոլոր թէ օրէնդարական իշխանու-
թեան մէջ սխալն անդադրանալը կը լայն :

Պարիզ 17 նոյ.
Խորհրդի Տոյրային պարագը կարգադ-
րելու համար Պ. Կոչնի և Պ. Ժուպի
առաջարկած ծրագիրն ալ ընդունեց :

Լոնտոն 20 նոյ.
Լորտ Սայլիգընը վաղը Փարիզ պիտի
մնայ, և իրիկուան պիտի մեկնի՝ իսկ
Պարիզի երթալու համար ուր մինչեւ հինգ-
շաբթի պիտի կենայ, յետոյ Վիեննա պի-
տի երթալ, չարափ, և իրիկուան մնայ, եր-
կուշաբթի թրիքտ պիտի երթալ և դեկտ.
1-ին Կ. Պոլսի պիտի հասնի :

Կալիքտ 20 նոյ.
Լրագիրը կը ծանուցանէ թէ Հընդ-
կատանի Անգլիական կառավարութիւնը
կը պատրաստուի զօրք զրկելու Եգիպտոս
եթէ պատերազմը չապի :

		Լոնտոն 20 նոյ.	
Բոն.	Բոն.	10 13/16	
Բոն.	1865	12	
»	1869	41	
»	1874	—	
»	1872	18 5/8	
»	1873	—	
Կալիքտ.		48 3/4	
Կալիքտ.	Բոն.	95 5/16	

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝
Երբեմն Մէնթէշի կառավարիչ
Բայիֆ Էֆէնտին Կարնոյ կուսակալին
Մուսլին անուանեցաւ :

Վեհ. Սաֆվէթին առաջին աստի-
ճանի Մէնթին պատուանշան շնոր-
հեց ծովագետ Հոգարթի փաշային Նոյն
պատուանշանին երկրորդ աստիճանը
շնորհեց Կալիքտի կառավարիչ Վսեմ.
Յ. Կոստանդ. փաշային և այլ քանի
մը բարձրաստիճան պաշտօնատարաց :

Սերտար Էքրէմ Ապտիւլ-Քէրիմ
փաշան կիրակի իրիկուն Կ. Պոլսի հա-
սաւ Բուսթիլի երկաթուղով, Պատե-
րագմական գործոց նախարարը քանի
մը բարձրաստիճան զինուորականաց
հետ մինչեւ Չորիւ դիմաւորութեան
գնացած էին :

Շաբաթեալը Սիրքէն հասած
ժամանակ, որոյ շրջակները դու-
շակներով զարդարեալ էին, բերա-
ւոր ժողովուրդը կեցցէ՝ աղաղակնե-
րով ուղղուեցին Ն. Վսեմութիւնը :
Երեկ Վսեմ. Ապտիւլ-Քէրիմ փա-
շան Վեհ. Սաֆվէթին ներկայանա-
լով խիստ սիրալի յարգանք ըն-
դունուեցաւ :

Կըսուի թէ Վսեմ. Ապրո Էֆէն-
տին Պուրլարի քննիչ յանձնախումբ
ինն անգամ անուանեալ է, և քանի
մ'օրէն պիտի մեկնի մայրաքաղա-
քէս :

Կը հաւատեն թէ նոր կազմուե-
լիք երեսփոխանական և ծերակուտի
ժողովոյ վերաբերեալ օրէնքներն ու
կանոնադրութիւններն այս շաբաթու
պիտի հրատարակուին :

Շաբաթ օրը Վսեմ. Միտհաթ փա-
շան, Տամաթ Մահմաթ փաշան և
Սերվիոյ փաշան Տարիֆուլուլայի ալ
և այլ պաշտօնատանց յարկերն աչքէ
անցուցին, որպէս զի նոր կազմուե-
լիք ազգային երեսփոխանական ժո-
ղովին համար յարմար խորհրդարան
մ'ընտրեն :

Բ. Դուռն ֆեաթիպ Էֆէնտի խա-
մայիլ պէյի նախագահութեամբ կազ-
մեալ յանձնախումբ մը Սիրիա պիտի
երթալ ֆէրիք. Շէվրէթ փաշային
հետ, վերջինին համար դատաստա-
նական քննութիւններ ընելու :

Կըսուի թէ Չանաքդաշի և Վոս-
փորի նեղուցներէն դիւրեւ ժամանակ
ներս մանելու թողութեան օտար
տէրութեանց նաւերուն արգիլուիլը
Չանաքդաշի մոտին բնաւ դիտողու-
թեան տեղի չէ տուեր, բայց Վոս-
փորի մոտին տէրութեանց դեսպան-
ներէն ոմանք դիտողութիւն ըրեր են
Դրան, թէ նեղից բերանն ապահով
և դիւրին նաւահանգիստ մը չըլտ-
նուելուն պատճառաւ թողութեամբ շո-
քեանները միմիկ օգտուած ժամա-
նակ յամաք ինչպէս փոխադրուի երթա-
կայ կըլլան եթէ նեղուցէն ներս չըր-
նան մանել դիւրեւ :

Բ. Դուռն՝ այս դիտողութիւննե-
րը նկատողութեան առիթով, որոշե-
ր է կրնն Գալիքտ կամ Պէտլի քլիմա-
նի խորհրդին ապատան անհամաձայն
մանեան բերդերուն թնդանթաց
ներքեւ, ուր Սե ծովէն եկող օտար

չօգտուելը կարող ըլլան դիւրեւ
երթալ երկաթ նաւեր :

Եւրոպական լրագիրը կը ծանու-
ցանեն թէ երկու Բուսթիլայիք՝
Հոնարայի և Փարիզի մէջ դժուարին
մեքենայներ շինել տալու փորձ փոր-
ձեր են Կ. Պոլսի բերելու և հոս գոր-
ծած եւրոպական, և թէ Անգ-
լիոյ և Գալիքտի ստիկանութիւն-
ներն իմանալով սաստիկ հսկողու-
թիւն կընեն եղեր, որպէս զի այդ-
մարդիկը նաւ մտած ժամանակ ընդ-
նեն : Մայրաքաղաքին ստիկանու-
թիւնն ալ իմանալով զայս՝ աշաւորջ
հսկողութիւն կընէ Եւրոպայէն եկող
նաւերուն վրայ :

Անգլիացի Սեր Ժոն Հէյ ծովա-
պետն՝ որ քանի մ'օրէն ի վեր մայ-
րաքաղաքս եկած է, Սէվիլիէ զո-
րանոցն և Հայտար փաշայի հիւան-
դանոցն աչքէ անցուց :

Եգիպտոսէն եկած հեռագիր մը
կը ծանուցանէ թէ երամից նախա-
րար խմայիլ փաշային աքսորուելուն
պատճառը՝ խտիվին դէմ դաւադ-
րութիւն մը կազմելն է եղեր :

Երեկուան Լաթիւլիքի մէջ հե-
տեւեալը կը կարգանք :

« Քաղաքին պատուաւոր բնակիչ-
ներէն մին անցեալ շաբաթու գրով
մ'իմացուցեր էր իւր ընտանեաց թէ
իւր գործերուն գէշ վիճակին պատ-
ճառաւ ինքզինք մեռցնել որոշած
էր : Այն օրէն ի վեր մարդն անցաւ
եղած էր, և ընտանեքը, որ Պաղլար
— Պաղի կը բնակի, ամեն հարկ եղած
խուզարկութիւնն ընել տուեր էր
զայն գանելու համար, բայց ի գուր
վերջապէս կիրակի օրը մարդուն
մարմինը ֆէրի-Քէյթէն անդին Չիֆ-
թէ—Ճէվիլ ըստած տեղը դանուե-
ցաւ ներսեալ վիճակի մէջ :

ԼՈՍՏԱՆԻՆԻՍ	
ԵՍԶԱՄԵՐ ՈՒՄՈՒՄԻՆԻ	
8 նոյ. երկուշաբթի իրիկուն	12, 11
9 նոյ. երեքշաբթի աստուած	
բացուեցաւ	12, 6
ժամ 6 1/2	12, 7
Կ. Պոլսի 8 նոյնիւրբ.	
Դեպքի մէջ Կ. Պոլսի Բոն. 2 1/4	
« Գիւն. անակոյ թեմա »	4, 20
Կ. Պոլսի Գալիքտի »	3,
Բիւր. Կ. Պոլսի »	2, 10
Բիւր. Կ. Պոլսի »	—
Կրկն. Կ. Պոլսի »	34 1/4
Փոխ. 1865	62
» 1869	63
» 1872	56
» 1873	49 1/4
» 1873	54
Թրաքիա	1 10

ԸՆԴՈՒՄԻ ԳՐԱՄՈՅ	
8 ՆՈՅՆԻՐ	
Միգր. իրա	109 30
Կալիքտ. Կ. Պոլսի	87 20
Կալիքտ. Կ. Պոլսի	88 20
Կալիքտ. Կ. Պոլսի	51 20
Հիւր. Կ. Պոլսի	—
Հիւր. Կ. Պոլսի	111 20
Հիւր. Կ. Պոլսի	152
Թրաքիա	424 10

Յաւ. օրտի կը ծանուցանենք
թէ Մեծ. Յոհաննէս Էֆէնտի Վ.
Տալուաեան, որ վերջին ժամանակ-
ներս ազգային Պատրիարքարանի դի-
ւանական թղթոց վերատեսչութեան
պաշտօնը կը վարէր, ուրաւ զիւր
յանկարծական մահուամբ ժամ 7-ին
միջոցներն իւր մահկանացուն կնքեց
56-րդ ամաց հասակի մէջ՝ ինքի սուգ-
ընկմով իւր սիրելի ընտանիքն ու
ազգականները :

Յուզարկաւորութեան տխուր հան-
դէսը շարաթ օրը կատարեցաւ ի
Բէրա :

Հանգուցեալ Յոհաննէս Էֆէնտին
իւր աղիւր բնաւորութեամբը, խոհա-
հականութեամբն և ազգասիրու-
թեամբն՝ ամեն զինքը ծանոթներուն
յարգել ու համարու մը գրուած էր :
